

ԶԵՐ ԵՐԵՒԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ

Ինչ պետք է իմանալ

Many Vaccine Information Statements are available in Spanish and other languages. See www.immunize.org/vis

Շատ Պատվաստումների տեղեկատվական բերրիներ հասանելի են իսպաներեն և այլ լեզուներով: Տես՝ www.immunize.org/vis

Այս տեղեկատվական բերրիիում հիշատակված պատվաստումներն ամենայն հավանականությամբ կստանան նորածիններին և վաղ մանկական տարիքի երեխաներին միևնույն այցի ընթացքում: Այլ պատվաստանյութեր (ներառյալ կարմրուկի, խոզուկի և կարմրախոտի դեմ, ջրծաղկի դեմ, ռոտավիրուսի դեմ, գրիպի դեմ և հեպատիտ Ա-ի դեմ պատվաստումները) սովորաբար խորհուրդ է տրվում ստանալ կյանքի առաջին տարիների ընթացքում:

Զեր երեխան այսօր կստանա հետևյալ պատվաստումները՝
 ԱԿԴՓ ՀԻԲ Հեպատիտ Բ Պոլիոմիելիտ PCV13

(Ներկայացուցի՝ նեւ համապատասխան վանդակները)

1 Ինչն՞ պետք է պատվաստվել:

Պատվաստումների միջոցով կանխարգելվող հիվանդություններն այժմ շատ ավելի քիչ են հանդիպում՝ պատվաստումների կատարման շնորհիվ: Այդ հիվանդությունները, այնուամենայնիվ, դեռևս իսպառ չեն վերացել: Որոշ հիվանդությունների համաճարակներ դեռևս տեղի են ունենում Միացյալ Նահանգներում: Պատվաստված երեխաների թվի նվազման հետ մեկտեղ աճում են երեխաների հիվանդությունների դեպքերը

Այս պատվաստումները կարող են պաշտպանել Զեր երեխային 7 մանկական հիվանդություններից.

- 1. Դիֆթերիա (ԱԿԴՓ) (դիֆթերիա, փայտացում, կապույտ հագ), DTap** պատվաստման անվան «Դ» տառը
 - Ախտաճանգներն են՝ կոկոսի հետևանքաբեր խիտ փառի առաջացումը, որը կարող է դժվարացնել շնչառությունը:
 - Դիֆթերիան կարող է հանգեցնել շնչառական խնդիրների, անդամալուծության և սրտային անբավարարության:
 - Նախքան պատվաստանյութի հայտնագործումը ամեն տարի ՄՆ-ում դիֆթերիայից մահանում էր մոտ 15,000 մարդ:
- 2. Փայտացում (ԱԿԴՓ պատվաստման անվան «Փ» տառը)**
 - Ախտաճանգներն են՝ մկանների ցավոտ ջրածոմները սովորաբար ամբողջ մարմնի երկայնքով:
 - Փայտացումը կարող է հանգեցնել ծնոտի ջրածոման, որը կարող է դժվարություն առաջացնել բերանը բացելիս կամ կլման ակտի ժամանակ:
 - Փայտացումով ախտահարումից մահանում են յուրաքանչյուր 10-ից 1-ը:
- 3. Կապույտ հագ (ԱԿԴՓ պատվաստման անվան «Կ» տառը)**
 - Ախտաճանգներն են՝ ուժեղ հագի նոպաները, որոնք կարող են դժվարություններ առաջացնել երեխայի համար՝ ուռելիս, խնելիս կամ շնչելիս: Այս նոպաները կարող են տևել մինչև մի ֆուրկ շաբաթ:
 - Կապույտ հագը կարող է հանգեցնել թոքաբորբի, նոպաների, գլխուղեղի ֆունկցիայի խանգարման կամ մահվան: Կապույտ հագը կարող է հատկապես մեծ վտանգ ներկայացնել երեխաների համար:
 - Կապույտ հագի պատճառով մահացածների հիմնական մասը կազմում են մինչև 3 ամսական հասակի երեխաները:

- 4. ՀԻԲ (Հեմոֆիլուս ինֆլուենցաբ Կոկոսի)**
 - Ախտաճանգները՝ կարող են լինել բարձր ջերմություն, գլխացավ, վզի մկանների ջրածոմություն, հագ և շնչառություն: Թույլ ախտահարության դեպքերում կարող են ախտաճանգներ չլինել:
 - ՀԻԲ-ը կարող է հանգեցնել մենինգիտի (գլխուղեղի և ողնուղեղի թաղանթների բորբոքում), թոքաբորբի, այրանականջների, քիճի ճակատամերձ երկու խոռոչների լորձաթաղանթի, այրան, հոդերի, ոսկրերի և սրտի թաղանթի ախտահարման, վերջույթների, ոսկրների, սրտամկանի մակերևույթի բորբոքման, գլխուղեղի վնասվածքի, կոկոսի՝ շնչառությունը դժվարացնող ուժեղ բորբոքման, և խլություն:
 - ՀԻԲ-ն ամենամեծ վտանգ է ներկայացնում մինչև 5 տարեկան երեխաների համար:
- 5. Հեպատիտ Բ**
 - Ախտաճանգներն են՝ հոգնածություն, լուծ և փսխում, դեղնացում (դեղին մաշկ կամ աչքեր), մկանային ցավ, հոդացավ և ստամոքսի ցավ: Սակայն սովորաբար որևէ ախտաճանգներ չեն լինում:
 - Հեպատիտ Բ-ն կարող է հանգեցնել լյարդի ֆունկցիայի խանգարման և լյարդի քաղցկեղի: Որոշ մարդկանց մոտ կարող է առաջանալ խրոնիկական (երկարատև) հեպատիտ Բ: Նրանք կարող են հիվանդ տեւ չունենալ կամ իրենց հիվանդ չգտալ, բայց կարող են վարակել ուրիշներին:
 - Հեպատիտ Բ-ն կարող է հանգեցնել լյարդի ֆունկցիայի խանգարման և քաղցկեղի՝ խրոնիկական վարակով 4 երեխաներից 1-ի մոտ:
- 6. Պոլիոմիելիտ**
 - Ախտաճանգները՝ կարող է լինել հարբուխանման հիվանդություն, կամ կարող են ընդհանրապես ախտաճանգներ չլինել:
 - Պոլիոմիելիտը կարող է հանգեցնել ընդմիջ առանցքային խանգարման (հիվանդը չի կարող շարժել ձեռքը կամ ոտը կամ երբեմն չի կարող շնչել) և մահվան:
 - 1950-ականներին ՄՆ-ում պոլիոմիելիտը ամեն տարի սահմանափակ էր դարձնում ավելի քան 15,000 մարդու:



7. Պենամակոկային հիվանդություն

- **Ախտաճանգը** են՝ բարձր ջերմությունը, տենդը, հազը և ծնոտի ցավը ցավը կրճավանդակում: Նորածինների մոտ ախտանիշները կարող են ներառել նաև մենինգիտը, նոսրացումը և, հազվադեպ դեպքերում՝ ցանր:
- **Պենամակոկային հիվանդությունը** կարող է հանգեցնել մենինգիտի (գլխուղեղի և ողնուղեղի թաղանթների բորբոսում), ախտաճանգի, բայց հակատամերձ երկու խոռոչների լորձաթաղանթի, արյան ախտահարման, թոքաբորբի, խլուրջան և գլխուղեղի ֆունկցիայի

խանգարման:

-Պենամակոկային մենինգիտով վարակվող 15 երեխաներից մոտավորապես 1-ը մահանում է, վարակի պատճառով:

Երեխաները սովորաբար վարակվում են այս հիվանդություններով այլ երեխաներից կամ չափահասներից, ովքեր կարող են նույնիսկ չիմանալ, որ հիվանդ են: Հեպատիտ Բ-ով հիվանդ մայրը կարող է վարակել իր երեխային ծննդաբերության ժամանակ: Փայտածման վարակը ներթափանցում է մարմին կտրվածքի կամ վերքի միջոցով, այն չի տարածվում մարդուց մեկ այլ մարդու:

Պատվաստումներ, որոնք պաշտպանում են ձեր երեխային այս յոթ հիվանդությունից՝

Պատվաստում	Դեղաչափերի քանակը	Նորհուրդ է տրվում հետևյալ տարիքում	Այլ տեղեկություններ
ԱԿԴՓ (դիֆթերիա, փայտացում, կապուչա հազ)	5	2 ամսեկան, 4 ամսեկան, 6 ամսեկան, 15-18 ամսեկան, 4-6 տարեկան	Որոշ երեխաներ ԱԿԴՓ պատվաստման վախճանը կստանան ԴՓ (DT, դիֆթերիա և փայտացում) պատվաստումը:
Հեպատիտ Բ	3	Նորածին, 1-2 ամսեկան, 6-18 ամսեկան	
Պոլիոմիելիտ	4	2 ամսեկան, 4 ամսեկան, 6-18 ամսեկան, 4-6 տարեկան	Պոլիոմիելիտի լրացուցիչ դեղաչափ կարող է անհրաժեշտ լինել որոշ երեխաներ համապարհարկելիս:
ՀԻԲ (Հեմոֆիլուս ինֆլուենցա բ տիպի)	3 կամ 4	2 ամսեկան, 4 ամսեկան, (6 ամսեկան), 12-15 ամսեկան	Պայուստում ունեն տարբեր ՀԻԲ պատվաստումներ: Նրանցից մի տեսակի դեպքում 6 ամսականի դեղաչափի անհրաժեշտ չէ:
PCV13 (Պենամակոկային)	4	2 ամսեկան, 4 ամսեկան, 6 ամսեկան, 12-15 ամսեկան	Որոշ առողջական խնդիրներով ավելի մեծ տարիքի երեխաների համար այս պատվաստումը նույնպես անհրաժեշտ է:

Ձեզ առողջական ծառայություններ մատուցողը որոշ պատվաստումներ կարող է առաջարկել որպես համատեղ պատվաստումներ՝ մի քանի պատվաստումներ տրվում են միաժամանակ: Համատեղ պատվաստումները նույնքան անվտանգ և արդյունավետ են, ինչքան առանձին պատվաստումները, և տրվում են երեխային ավելի քիչ բանակով ներարկումներով:

2 Որոշ երեխաներ չպետք է ստանան որոշ պատվաստումներ

- Երեխաների մեծ մասը կարող են անվտանգ կերպով ստանալ բոլոր այս պատվաստումները: Պայուստում ունեն, սակայն, որոշ բացառություններ՝
 - Եթե պատվաստում ստանալու օրը երեխան թեթև մրսած է կամ ունի այլ հիվանդության թեթև ճշաններ, նա կարող է պատվաստվել: Եթե երեխան չափավոր կամ ծանր հիվանդ է այն օրը, երբ նախատեսվում է կատարել պատվաստումը, նրան կարող են խնդրել գալ մեկ այլ օր:
 - Եթե պատվաստումը ստանալուց հետո երեխայի մոտ դրսևորվել է կյանքի համար վտանգավոր ալերգիկ հակազդեցություն, նա չպետք է ստանալ այդ պատվաստման մեկ այլ դեղաչափ: **Տեղեկացրե՛ք պատվաստումը կատարող անձանց ձեր երեխայի մոտ պատվաստումից հետո ուժեղ ալերգիա երբևէ առաջացած լինելու մասին:**
 - Եթե երեխան ուժեղ (կյանքի համար վտանգավոր) ալերգիա ունի որևէ նյութի նկատմամբ, նա չպետք է ստանա այդ նյութը պարունակող պատվաստում: Տեղեկացրե՛ք պատվաստումը կատարող անձանց ձեր երեխայի մոտ պատվաստումից հետո ուժեղ այն ալերգիաների մասին, որոնցից դուք տեղյակ ե՛ք:

- Ջրուցե՛ք բժշկի հետ նախքան Ձեր երեխան կստանա...**
- **ԱԿԴՓ պատվաստում**, եթե Ձեր երեխան երբևէ ունեցել է հետևյալ հակազդեցություններից որևէ մեկը նախկին ԱԿԴՓ դեղաչափից հետո՝
 - Գլխուղեղի կամ նյարդային համակարգի հիվանդություն 7 օրվա ընթացքում
 - Անընդունել լաց 3 ժամվա ընթացքում կամ ավել
 - Նոսր կամ կռապ
 - 105°F-ից բարձր ջերմություն
 - **PCV13 պատվաստում**, եթե Ձեր երեխան երբևէ ուժեղ հակազդեցություն է ունեցել ԱԿԴՓ-ի դեղաչափից հետո (կամ այլ պատվաստանյութ, որը պարունակում է դիֆթերիայի հակատոսին) կամ նախկինում օգտագործվող պենամակոկային պատվաստանյութի՝ PCV7-ի դեղաչափից հետո:

3 Պատվաստման հակազդեցության վտանգները

Պատվաստումները, ինչպես և դեղամիջոցները, կարող են ունենալ կողմնակի ազդեցություններ: Դրանք սովորաբար մեղմ են և անհայտանում են որոշ ժամանակ անց: Պատվաստումների հակազդեցություններից շատերը վտանգավոր չեն՝ թուլություն, ներարկման շրջանում կարմրություն կամ այտուցվածություն, կամ ոչ բարձր ջերմություն: Դրանք տեղի են ունենում բոլոր

պատվաստումներից մոտավորապես մինչև կեսի դեպքում՝ կախված պատվաստման տեսակից: Ծանր հակազդեցությունները նույնպես հնարավոր են, սակայն հազվադեպ են տեղի ունենում: **Պոլիոմիելիտի, հեպատիտ Բ-ի և ՀԻՖ պատվաստումների** ժամանակ նկատվել են միայն մեղմ հակազդեցություններ:

ԱԿԴՓ և **պենտակոկային** պատվաստումները կապված են եղել նաև այլ խնդիրների հետ

ԱԿԴՓ Պատվաստում

- **Մեղմ խնդիրներ**՝ անհանգստություն (3 երեխաներից 1-ի մոտ), հոգնածություն կամ վատ ախորժակ (10 երեխաներից 1-ի մոտ), վախում (50 երեխաներից 1-ի մոտ), ամբողջ ձեռքի կամ ոտքի այտուցվածություն 1-7 օրվա ընթացքում (30 երեխաներից 1-ի մոտ)՝ սովորաբար 4-րդ կամ 5-րդ դեղաչափից հետո:
- **Միջին ծանրության խնդիրներ**՝ նոպա (14,000 երեխաներից 1-ի մոտ), անընդմեջ լաց 3 ժամվա ընթացքում կամ ավել (1,000 երեխաներից 1-ի մոտ), 105°F-ից բարձր ջերմություն (16,000 երեխաներից 1-ի մոտ):
- **Ծանր խնդիրներ**. երկարատև նոպաներ, կոմա, թույլ գիտակցություն և գլխուղեղի ֆունկցիայի ընդմիջտ խանգարում է գրանցվել ԱԿԴՓ պատվաստումից հետո: Այս դեպքերը հազվադեպ են հանդիպում:

Պենտակոկային պատվաստում

- **Մեղմ խնդիրներ**՝ ֆևոտություն կամ ախորժակի ժամանակավոր կորուստ (2 կամ 3 երեխաներից մոտավորապես 1-ի մոտ), անհանգստություն (10 երեխաներից մոտավորապես 8-ի մոտ):
- **Միջին ծանրության խնդիրներ**՝ 102.2°F-ից բարձր ջերմություն (20 երեխաներից մոտավորապես 1-ի մոտ)

Յանկացած պատվաստումից հետո՝

Յանկացած դեղամիջոց կարող է առաջացնել ալերգիկ ծանր հակազդեցություն: Պատվաստումից հետո ուժեղ ալերգիկ հակազդեցությունները շատ հազվադեպ են. մեկ միլիոն պատվաստումներից հետո մոտ 1 դեպք է գրանցվում, որը սովորաբար տեղի է ունենում պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամվա ընթացքում:

Պատվաստումից հետո շատ հազվադեպ հնարավոր են ուղի ուժեղ ցավ և ձեռքի թուլության զգացում՝ այն ձեռքին, որին կատարվել է ներարկումը:

Շատ հազվադեպ են հանդիպում պատվաստումից հետո ուժեղ ալերգիկ հակազդեցություններ, միլիոն դեպքերից ավելի քան 1 դեպքում: Եթե այդպիսին ի հայտ գա, այն սովորաբար կլինի պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամվա ընթացքում:

Ինչպես և ցանկացած դեղամիջոցի դեպքում, շատ քիչ հավանականություն կա, որ պատվաստումը կհանգեցնի լուրջ վնասվածքի կամ մահվան:

Պատվաստումների անվտանգությունը միշտ վերահսկվում է: Երազուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք՝ www.cdc.gov/vaccinesafety/

4 Ի՞նչին պետք է ուշադրություն դարձնել:

Ի՞նչին պետք է ուշադրություն դարձնել:
• Ուշադրություն դարձրե՛ք այն ամենին, ինչը Ձեզ անհանգստացնում է, ինչպես օրինակ՝ ուժեղ ալերգիկ հակազդեցության նշանները, շատ բարձր ջերմությունը կամ:

Ուժեղ ալերգիկ հակազդեցությունը կարող է արտահայտվել ցանով, դեմքի կամ կոկորդի այտուցվածությամբ, դժվարացած շնչառությամբ, սրտի արագացած աշխատանքով, գլխապտույտով և թուլությամբ: Նորածին երեխաների մոտ ալերգիկ

հակազդեցությունները կարող են արտահայտվել նաև ջերմության բարձրացմամբ, ֆևոտությամբ և վատ ախորժակով: Ավելի մեծ տարիքի երեխաների մոտ հակազդեցությունը կարող է արտահայտվել արագացված սրտխփացով, գլխապտույտով և թուլությամբ: Այս երևույթները սովորաբար սկսվում են պատվաստումից մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ հետո:

Ի՞նչ պետք է անել:

- Եթե Ձեր կարծիքով ուժեղ ալերգիկ հակազդեցություն կամ մեկ այլ վտանգավոր երևույթ է սկսվել, որը անհապաղ բուժօգնության կարիք ունի, զանգահարե՛ք 9-1-1 կամ տեղափոխե՛ք այդ մարդուն ամենամոտ հիվանդանոց: Այլպես, զանգահարե՛ք Ձեր բժշկին:

Իրանից հետո հակազդեցության մասին պետք է գեկուցել Պատվաստումների անբարենպաստ երևույթների գեկուցման համակարգ (VAERS, Vaccine Adverse Event Reporting System): Ձեր բժիշկը պետք է գրանցի այդ գեկույցը կամ կարող ե՛ք դա անել ինքներդ ՎԱԵՐՏ-ի վեբ կայքում՝ www.vaers.hhs.gov կամ զանգահարելով՝ **1-800-822-7967**:

VAERS-ը բժշկական խորհրդատվություն չի տրամադրում:

5	Պատվաստման արդյունքում պատճառված վնասվածքների փոխհատուցման ազգային ծրագիր
----------	--

Պատվաստման արդյունքում պատճառված վնասվածքների փոխհատուցման ազգային ծրագիրը (VICP, The National Vaccine Injury Compensation Program) դաշնային ծրագիր է, որն ստեղծվել է՝ մարդկանց փոխհատուցելու որոշ պատվաստումների հետևանքով առաջացած վնասվածքները:

Բոլոր նրանք, ովքեր կարծում են, որ իրենք պատվաստման հետևանքով վնասվածք են ստացել, կարող են տեղեկանալ ծրագրի մասին և դիմում ներկայացնելու մասին՝ զանգահարելով **1-800-338-2382** կամ այցելելով VICP վեբ կայքը՝ www.hrsa.gov/vaccinecompensation: Փոխհատուցման դիմում ներկայացնելու

ժամանակային սահմանափակում գոյություն ունի:

6	Ինչպե՞ս կարող եմ ես իմանալ ավելի:
----------	--

- Հարցրե՛ք Ձեր բժշկին:
- Զանգահարե՛ք տեղական կամ նահանգային առողջապահության վարչություն:
- Կապվե՛ք Հիվանդությունների Վերահսկողության և Կանխարգելման Կենտրոնի հետ (CDC, Centers for Disease Control and Prevention):
 - Զանգահարե՛ք 1-800-232-4636 (1-800-CDC-INFO)
 - Այցելե՛ք CDC-ի վեբ կայքը՝ www.cdc.gov/vaccinesor

Vaccine Information Statement

Multi Pediatric Vaccines

Armenian

11/05/2015

42 U.S.C. § 300aa-26

Translation provided by the California Department of Public Health

Office Use Only

